Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-169-27.10.2017-ՊԱ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-99 օրենքի 1-ին հոդվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի>> (այսուհետ՝ Կանոնագիրք) 71-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Զինծառայողների զինվորական համազգեստի և զինվորական տարբերանշանների միասնական ձևերն ու դրանց նկարագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>:

ՀՈԴՎԱԾ 2. Կանոնագրքի 2-րդ հավելվածում՝

1. <<Կանոնադրություն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասի մարտական դրոշի մասին>> բառերը հանել.

2. 1-ին մասի վերջում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

<<Զորամասի մարտական դրոշի կանոնադրությունը, մարտական դրոշի նկարագիրը և մարտական դրոշի վկայագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:>>.

3. ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի երկրորդ պարբերությունը:

ՀՈԴՎԱԾ 3. Կանոնագրքի 3-րդ հավելվածում՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Զորամասին մարտական դրոշ և շքանշաններ հանձնելու կարգը>>.

2. 3-րդ մասի երկրորդ նախադասությունում <<տրվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի պահպանագիրը>> բառերը փոխարինել <<տրվում է նաև մարտական դրոշի վկայագիրը>> բառերով.

3. 8-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Մարտական դրոշը հանձնողն ընթերցում է մարտական դրոշի վկայագիրը, որից հետո մարտական դրոշը և մարտական դրոշի վկայագիրը փոխանցում է զորամասի հրամանատարին:>>.

4. 9-րդ մասի առաջին նախադասությունում <<պահպանագիրը>> բառը փոխարինել <<մարտական դրոշի վկայագիրը>> բառերով.

5. 17-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Շքանշանը հանձնող անձը զորաշարքի առջև ընթերցում է զորամասը շքանշանով պարգևատրելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը, որից հետո հրամանագիրը և շքանշանի վկայականը հանձնում է զորամասի հրամանատարին, իսկ շքանշանն ամրացնում է մարտական դրոշին:>>.

6. 19-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Նշված դեպքում ընթերցվում է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ զորամասը շքանշանով պարգևատրելու մասին, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանը՝ զորամասին մարտական դրոշ հանձնելու մասին:>>.

7. 21-րդ մասի երկրորդ պարբերությունում <<պահպանագրում>> բառը փոխարինել <<մարտական դրոշի վկայագրում>> բառերով.

8. 22-րդ մասի

1) երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններում <<նրա պահպանագիրը>> բառերը փոխարինել <<մարտական դրոշի վկայագիրը>> բառերով,

2) հինգերորդ պարբերությունում <<նրանց պահպանագիրը>> բառերը փոխարինել <<մարտական դրոշների վկայագրերը>> բառերով.

9. 32-րդ մասի առաջին պարբերությունում <<նրա պահպանագիրը>> բառերը փոխարինել <<մարտական դրոշի վկայագիրը>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 152-րդ և 153-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
" 3 " դեկտեմբերի 1996 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը (կցվում է):
ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7 հունվարի 1997 թ.
ՀՕ-99

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
1996 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՕՐԵՆՔՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հոդված 71. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների համար սահմանվում են համազգեստների անհրաժեշտ տեսակներ: ~~Զինվորական համազգեստը եւ տարբերանշանները հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:~~ ***Զինծառայողների զինվորական համազգեստի և զինվորական տարբերանշանների միասնական ձևերն ու դրանց նկարագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*** Զինվորական համազգեստ կրելու իրավունք ունեն բոլոր զինծառայողները, ինչպես նաեւ պահեստազորում կամ պաշտոնաթողության մեջ գտնվող քաղաքացիները, որոնք զինվորական ծառայությունից զորացրվել են զինվորական համազգեստ կրելու իրավունքով:
Զինվորական համազգեստ կրում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) կողմից հաստատված կանոնների խիստ համապատասխանությամբ:
Զորամասի տարածքից դուրս հանգստի, արձակման կամ արձակուրդի մեջ եղած ժամանակ զինծառայողներին թույլատրվում է զինվորական համազգեստ չկրել:

Հավելված 2
Հոդվ. 76

~~ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ~~
~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶՈՐԱՄԱՍԻ~~
~~ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ~~

ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասի մարտական դրոշը զինվորական պատվի, արիության ու փառքի խորհրդանիշն է: Նա յուրաքանչյուր զինծառայողի՝ Հայրենիքին անձնվիրաբար ծառայելու, այն արիաբար եւ հմտորեն պաշտպանելու, արյունն ու կյանքը չխնայելով՝ հայրենի հողի յուրաքանչյուր թիզը պաշտպանելու սրբազան պարտքի հիշեցումն է: ***Զորամասի մարտական դրոշի կանոնադրությունը, մարտական դրոշի նկարագիրը և մարտական դրոշի վկայագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:***

2. Մարտական դրոշը զորամասերին են հանձնում նրանց կազմավորումից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:

3. Մարտական դրոշը զորամասում պահվում է նրա գոյության ողջ ընթացքում՝ անկախ զորամասի անվան եւ համարի փոփոխությունից:

~~Զորամասի անվան եւ համարի փոփոխությունը գրանցվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի պահպանագրում, որը տրվում է մարտական դրոշի հանձնման ժամանակ:~~

4. Մարտական դրոշը մշտապես գտնվում է իր զորամասի հետ, իսկ մարտի դաշտում՝ զորամասի մարտական գործողությունների շրջանում:

5. Զորամասի ողջ անձնակազմը պարտավոր է մարտի ժամանակ անձնվիրաբար եւ արիաբար պաշտպանել մարտական դրոշը եւ թույլ չտալ նրա զավթումը թշնամու կողմից:

Մարտական դրոշի կորստի դեպքում զորամասի հրամանատարը եւ այդ խայտառակության անմիջական մեղավոր զինծառայողները ենթակա են ռազմական տրիբունալի դատին, իսկ զորամասը՝ կազմացրման:

Հավելված 3
Հոդվ. 76

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ~~

~~ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ~~
~~ԶՈՐԱՄԱՍԵՐԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ ԵՎ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ~~

ԶՈՐԱՄԱՍԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ ԵՎ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մարտական դրոշը հանձնվում է բրիգադներին, գնդերին, առանձին գումարտակներին, դիվիզիոններին, ավիաէսկադրիլիաներին, ուսումնական զորամասերին, ռազմական ուսումնական հաստատություններին:

Տեխնիկական, թիկունքի ապահովման, պահպանության եւ սպասարկման, կարգապահական, ռազմաշինարարական միավորումներին ու զորամասերին եւ համանման այլ զորամասերի մարտական դրոշ չի հանձնվում, բացառությամբ այն զորամիավորումների եւ զորամասերի, որոնք պարգեւատրված են շքանշաններով:

2. Հուշադրոշները զորամասում որպես մասունք պահվում են զորամասի մարտական դրոշի մոտի պահակակետերում եւ դրա հետ միասին դուրս են բերվում տոներին եւ հանդիսավոր իրադարձություններին նվիրված հանդիսավոր նիստերի ժամանակ: Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի թույլտվությամբ եւ զորամասի կազմացրման ժամանակ հատուկ դեպքերում այդ դրոշները, ինչպես նաեւ իշխանության եւ կառավարման տեղական պետական մարմինների, հասարակական այլ կազմակերպությունների կողմից հանձնված դրոշները պատմական համառոտ տեղեկանքով հանձնվում են զինված ուժերի թանգարան՝ պահպանման:

ԶՈՐԱՄԱՍԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Մարտական դրոշը զորամասին հանձնվում է զորամասի կազմավորման ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Մարտական

դրոշը զորամասին հանձնելու ժամանակ ~~տրվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի պահպանագիրը~~ ***տրվում է նաև մարտական դրոշի վկայագիրը***:

4. Մարտական դրոշի հանձնման համար զորամասը զենքով շարվում է շարային ստուգատեսի համար՝ ՀՀ զինված ուժերի շարային կանոնադրությամբ սահմանված կարգով:

Մարտական պայմաններում մարտական դրոշի հանձնման ժամանակ զորամասի շարվածքի կարգը սահմանվում է մարտական իրադրության հաշվառումով:

5. Մարտական դրոշը զորաշարվածքի տեղը դուրս բերելու համար մարտական դրոշը հանձնելու եկած պետին ի տնօրինություն զորամասի հրամանատարը նշանակում է դրոշակակիր եւ երկու օգնական՝ սերժանտներից, ենթասպաներից կամ սպաներից, գերազանցապես շքանշաններով եւ մեդալներով պարգեւատրվածների, մարտական պատրաստության գերազանցիկների թվից, եւ դրոշակակիր դասակ:

6. Սահմանված ժամին դրոշակակիրը դուրս է բերում ծածկոցով մարտական դրոշը եւ մարտական դրոշը հանձնող պետից երեք քայլ հեռավորության վրա շարժվում է զորաշարվածքի տեղը: Այդ ընթացքում դրոշակակիրը մարտական դրոշը պահում է ձախ ուսին այն դիրքով, որը նշված է Հայաստանի Հանրապետության շարային կանոնադրության մեջ, դրոշակակրի աջ եւ ձախ կողքերից քայլում են օգնականները:

Երբ մարտական դրոշը հանձնելու եկած անձը 40-50 քայլ հեռավորությամբ մոտենում է զորաշարքին, զորամասի հրամանատարը հրաման է տալիս:

Օրինակ՝ "Գունդ, դրոշի ներքո, զգաստ: Հավասարությունը դեպի աջ (ձախ, կենտրոն)". Եթե գունդը զինված է կարաբիններով, ապա տրվում է հետեւյալ հրամանը. "Գունդ, դրոշի ներքո զգաստ: Աջից (ձախից, ճակատից) դիմավորելու համար ողջունիր":

Նվագախումբը կատարում է "Դիմավորման քայլերգը":

7. Զորամասի հրամանատարը հրամանը տալուց հետո ձեռքը դնում է գլխարկին, մոտենում մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությանը, կանգ առնում նրա դիմաց 2-3 քայլ հեռավորության վրա եւ զեկույց տալիս:

Օրինակ՝ "Պարոն գեներալ-մայոր: 105-րդ մոտոհրաձգային գունդը մարտական դրոշի հանձնման առիթով շարված է: Գնդի հրամանատար՝ գնդապետ Աղաջանյան":

Մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությանը զեկույց տալու համար գնդի հրամանատարի կանգ առնելու պահին նվագախումբը դադարեցնում է նվագը: Դրոշակակիրը մարտական դրոշը ուղղահայաց կանգնեցնում է աջ ոտքի մոտ՝ պահելով այն ազատ իջեցված աջ ձեռքով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային կանոնադրության պահանջների:

8. Մարտական դրոշը հանձնելու եկած անձնավորությունը, ընդունելով զեկույցը, կանգնում է զորաշարքի կենտրոնի առջեւ, ողջույն տալիս զորամասին եւ մոտենում դրոշակակրին: Մարտական դրոշը հանձնելու եկած անձի մոտենալուն պես դրոշակակիրը ներքեւ է թեքում մարտական դրոշը եւ երկու ձեռքով պահում հորիզոնական դիրքով: Մարտական դրոշը հանձնողը հանում է ծածկոցը եւ բացում մարտական դրոշը: Այնուհետեւ դրոշակակիրը, մարտական դրոշը ուղղահայաց դնելով եւ աջ ձեռքով պահելով, կանգնում է դեմքով դեպի զորաշարքը:

~~Մարտական դրոշը հանձնողը կարդում է Հայաստանի Հանրապետության Նախագահի պահպանագիրը, որից հետո մարտական դրոշը եւ պահպանագիրը հանձնում է զորամասի հրամանատարին:~~ ***Մարտական դրոշը հանձնողն ընթերցում է մարտական դրոշի վկայագիրը, որից հետո մարտական դրոշը և մարտական դրոշի վկայագիրը փոխանցում է զորամասի հրամանատարին:*** Նվագախումբը կատարում է պետական օրհներգը:

9. Զորամասի հրամանատարը, ընդունելով մարտական դրոշը եւ ~~պահպանագիրը~~ ***մարտական դրոշի վկայագիրը***, նվագախմբի պետական օրհներգի կատարման ավարտից հետո մարտական դրոշը հանձնում է դրոշակակրին եւ հրաման տալիս "Դրոշակակիր, իմ հետեւից, քայլով-մարշ": Դրոշակակիրը "քայլով" հրամանով մարտական դրոշը դնում է ձախ ուսին:

10. Զորամասի հրամանատարը, նրա հետեւից 3 քայլ հեռավորությամբ՝ դրոշակակիրը մարտական դրոշով, եւ օգնականները գնում են դեպի շարքի ձախ թեւը, որից հետո շարքի ճակատի երկայնքով (շարքից 10-15 քայլ հեռավորության վրա) անցնում են դեպի աջ թեւը: Գնալով զորաշարքի աջ թեւը՝ զորամասի հրամանատարը դրոշակակրին եւ օգնականներին հրամայում է զբաղեցնել շարքում իրենց հատկացված տեղը: Երթն սկսվելուց մինչեւ

դրոշակակրի շարք կանգնելը նվագախումբը կատարում է "Դիմավորման քայլերգը": Զորամասը ողջունում է մարտական դրոշը եւ երկարաձիգ "Ուռա"-յով:

Երբ դրոշակակիրը կանգնում է իր տեղը, զորամասի հրամանատարը նվագախմբի նվագը դադարեցնելու նշան է տալիս, դուրս է գալիս շարքի կենտրոն, կանգնում մարտական դրոշը հանձնողի կողքին, որից հետո նա ցուցումով տալիս "Ազատ" հրամանը, իսկ եթե գունդը պատվի առած դիրքով կարաբիններ ուներ, ապա տրվում է "Գունդ, ոտքին՝ առ" հրամանը:

11. Մարտական դրոշը հանձնողը շնորհավորում է զորամասին մարտական դրոշ ստանալու կապակցությամբ, զորամասն այդ շնորհավորանքին պատասխանում է եռակի երկարաձիգ "Ուռա"-յով: Դրանից հետո զորամասի հրամանատարը հանդես է գալիս պատասխան խոսքով:

12. Վերջում զորամասը հանդիսավոր երթով անցնում է մարտական դրոշը հանձնողի առջեւով: Հանդիսավոր երթով անցնելուց հետո զորամասը կրկին շարվում է մարտական դրոշը տարվում է նրա պահատեղը:

13. Մարտական դրոշ ստանալու մասին տրվում է գնդի հրաման, որով սահմանվում է մարտական դրոշի պահատեղը եւ նշանակվում են դրոշակակիր ու օգնականներ:

14. Մարտական դրոշի դիրքը զորաշարքում, նրա դուրսբերման եւ տանելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային կանոնադրությամբ, իսկ պահպանման կարգը՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային եւ պահակային ծառայությունների կանոնագրքով:

(14-րդ կետը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն օրենք)

ԶՈՐԱՄԱՍԻՆ ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Շքանշանը զորամասին հանձնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված հրամանատարը (պետը):

16. Շքանշանը հանձնելու համար զորամասը զենքով շարվում է շարային ստուգատեսի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային կանոնադրությամբ սահմանված կարգով:

17. Շքանշանը հանձնող անձը, ընդունելով զորամասի հրամանատարի զեկույցը եւ անձնակազմին ողջույն տալով, կանգնում է զորաշարքի կենտրոնի դիմաց:

Զորամասի հրամանատարը տալիս է "Դրոշակակիր, դեպի ինձ քայլով-մարշ" հրամանը: Այդ հրամանով շտաբի օգնականը (տեղակալը), կանգնելով մարտական դրոշի առջեւ 2 քայլ հեռավորության վրա, տալիս է "Իմ հետեւից քայլով-մարշ" հրամանը եւ, մոտենալով շքանշանը հանձնողին, դրոշակակրին եւ օգնականին կանգնեցնում է դեմքով դեպի զորաշարքը, իսկ ինքը կանգնում է նրանցից աջ: ~~Դրանից հետո շքանշանը հանձնող անձը զորաշարքի առջեւ կարդում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ու զորամասը շքանշանով պարգեւատրելու մասին պահպանագիրը, որից հետո զորամասի հրամանատարին է հանձնում պահպանագիրը, իսկ շքանշանն ամրացնում է զորամասի մարտական դրոշին:~~ ***Շքանշանը հանձնող անձը զորաշարքի առջև ընթերցում է զորամասը շքանշանով պարգևատրելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը, որից հետո հրամանագիրը և շքանշանի վկայականը հանձնում է զորամասի հրամանատարին, իսկ շքանշանն ամրացնում է մարտական դրոշին:*** Նվագախումբը կատարում է պետական օրհներգը: Նվագախմբի նվագից հետո շքանշանը հանձնած անձը զորամասին շնորհավորում է պետական պարգեւի առթիվ: Զորամասը շնորհավորանքին պատասխանում է եռակի երկարաձիգ "Ուռա"-յով: Զորամասի հրամանատարը հանդես է գալիս պատասխան խոսքով:

18. Պատասխան խոսքով հանդես գալուց հետո զորամասի հրամանատարը տալիս է "Դրոշակակիր, իմ հետեւից քայլով-մարշ" հրամանը:

Հրամանը տալուց հետո զորամասի հրամանատարը, նրա հետեւից 3 քայլ հեռավորությամբ՝ շտաբի պետի օգնականը (տեղակալը), այնուհետեւ, նրանից երկու քայլ հետո դրոշակակիրը մարտական դրոշով եւ օգնականները ուղղվում են դեպի զորամասի ձախ թեւը, որից հետո շարքի ճակատի երկայնքով (շարքից 10-15 քայլ հեռավորության վրա) անցնում են զորամասի աջ թեւը, որտեղ շտաբի օգնականը (տեղակալը) եւ դրոշակակիրն ու օգնականները կանգնում են շարքում իրենց հատկացված տեղը:

Երթն սկսվելուց մինչեւ շարքում դրոշակակրի կանգնելը նվագախումբը կատարում է "Դիմավորման քայլերգը": Զորամասը ողջունում է մարտական դրոշը երկարաձիգ "Ուռա"-յով: Վերջում զորամասը հանդիսավոր երթով անցնում է շքանշանը հանձնած անձի առջեւով:

19. Եթե զորամասը, որին շքանշան է հանձնվում, մարտական դրոշ չունի, ապա կատարվում է մարտական դրոշի եւ շքանշանի միաժամանակյա հանձնում սույն Կանոնագրքի 3-12 կետերում նշված կարգով: ~~Ընդ որում, Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ մարտական դրոշի պահպանագրի ընթերցումից հետո կարդացվում է Նախագահի հրամանագիրը՝ զորամասը շքանշանով պարգեւատրելու մասին:~~ ***Նշված դեպքում ընթերցվում է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ զորամասը շքանշանով պարգևատրելու մասին, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանը՝ զորամասին մարտական դրոշ հանձնելու մասին:***

20. Շքանշանները, որոնցով պարգեւատրված է զորամասը, մարտական դրոշին են ամրացվում պաստառի երեսի կողմից ("Հանուն մեր հայրենիքի" մակագրությամբ)՝ դրանց ավագության կարգով:

Առաջին շքանշանն ամրացվում է պաստառի վերին եզրից 15 եւ փայտաձողից 10 սմ հեռավորության վրա, մնացածները ամրացվում են փայտաձողի երկայնքով վերեւից ներքեւ՝ միմյանցից 5-10 սմ հեռավորության վրա:

Անհրաժեշտության դեպքում շքանշանները մարտական դրոշին ամրացնելու համար պաստառի վրա անցքեր են արվում, որոնք եզրակարվում են մետաքսաթելով:

ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԻ, ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

21. Մարտական դրոշը պատկանում է զորամասին նրա գոյության ողջ ընթացքում, անկախ նրա համարի եւ անվանման փոփոխությունից:

Զորամասի վերակազմավորման հետեւանքով նրա անվանման եւ համարակալման փոփոխությունները վերադաս հրամանատարը (պետը) գրանցում է ~~պահպանագրում~~ ***մարտական դրոշի վկայագրում*** եւ հաստատվում զինանշան կնիքով:

22. Զորամասերի մարտական ավանդույթների եւ նրանց մարտական ծառայությունների ու հիշատակի պահպանման համար մարտական դրոշները, շքանշանները եւ պատվանունները կարող են փոխանցվել ուրիշ զորամասերի:

Ընդ որում, մարտական դրոշի, շքանշանների եւ պատվիրատուների փոխանցումը կատարվում է միայն զորամասերի միջեւ ուղղակի ժառանգորդության առկայության դեպքում, այն է՝ մեկ կամ մի քանի զորամասեր նոր զորամասի (զորամասերի) վերակազմավորելու ժամանակ:

Մի զորամասը մյուսի վերակազմավորելու դեպքում վերակազմավորող զորամասի մարտական դրոշը, ~~նրա պահպանագիրը~~, ***մարտական դրոշի վկայագիրը,*** շքանշանները եւ պատվիրատուները ամբողջությամբ անցնում են նոր զորամասին:

Մի զորամասը երկու կամ ավելի զորամասերի վերակազմավորելու դեպքում վերակազմավորվող զորամասի մարտական դրոշը, ~~նրա պահպանագիրը~~, ***մարտական դրոշի վկայագիրը,*** շքանշանները եւ պատվիրատուները ամբողջությամբ անցնում են նոր զորամասերից մեկին:

Երկու կամ ավելի զորամասերը մեկ զորամասի վերակազմավորելու ժամանակ վերակազմավորվող զորամասերից մեկի մարտական դրոշը եւ ~~նրա պահպանագիրը~~, ***մարտական դրոշի վկայագիրը,*** շքանշանները, պատվանունները ամբողջությամբ անցնում են այդ նոր զորամասին, մյուս զորամասերի մարտական դրոշները, ~~նրանց պահպանագիրը~~, ***մարտական դրոշների վկայագրերը,*** շքանշանները, պատվանունները հանձնվում են սահմանված կարգով:

23. Իրենց սխրանքների համար պաշտպանության նախարարի հրամաններով զորամասերի ցուցակներում հավերժ կամ որպես պատվավոր զինվորներ գրանցված զինծառայողների հիշատակը պահելու նպատակով զորամասի կազմացրման դեպքում նրանց անունները կարող են գրանցվել այլ զորամասերի ցուցակներում ըստ

ժառանգորդության, շքանշանների եւ պատվանունների փոխանցման մասին 21-րդ կետում շարադրված կարգով: Այդ դեպքում զինծառայողների անունների գրանցումը զորամասերի ցուցակներում հավերժ կամ որպես պատվավոր զինվորների կատարվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

24. Զորամասի մարտական դրոշը պետք է գտնվի.

զորամասի զորանոցային տեղակայման վայրում եւ բնակավայրերում նրա տեղավորման դեպքում՝ զորամասի շտաբի շինություններում,

մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում՝ զորամասի հրամանատարական կետում,

հրաձգարանում եւ զորամասի ճամբարային (վրաններով) տեղադրման դեպքում վրանների առաջին շարքի գծում՝ զորամասի կենտրոնում հատուկ ծածկի տակ,

զորավարժությունների ժամանակ՝ զորամասի հրամանատարի նշած տեղում, զորամիավորման մարտական դրոշը զորամիավորման հրամանատարի ցուցումով սովորաբար պահվում է լավագույն զորամասում, այդ զորամասի մարտական դրոշի հետ:

Թույլատրվում է համատեղ պահել զորամիավորման՝ նույն զինվորական ավանում տեղաբաշխված մի քանի փոքրաթիվ զորամասերի մարտական դրոշները:

25. Մարտական դրոշը մշտապես պետք է գտնվի պահպանության ներքո, իսկ զորամաս դուրս բերելու դեպքում դրոշակակիր դասակի պահպանության ներքո:

(25-րդ կետը փոփ. 01.03.17 ՀՕ-52-Ն օրենք)

26. Մարտական դրոշը զորամասի շտաբում տեղադրվում է ապակեպատ տարածքում եւ պահվում է շքանշանների եւ շքանշանային ժապավենների հետ, փաթաթված վիճակում (կամ բաց վիճակում՝ ապակեպատ պահարանի առկայության դեպքում) եւ ծածկոցով՝ կնքված զորամասի զինանշան զմուռսե կնիքով: Այն պետք է ուղղահայաց դիրքով տեղադրված լինի դրոշակի հենակի (ձողափայտի ամրացնելու համար կտրվածքներով կանգնակի) մեջ:

Մարտական դրոշի ապակեպատ տարածքը պետք է սարքավորված լինի հրշեջ ազդարարման եւ ձայնաազդանշանային համակարգերով, որոնք միացվում են զորամասի հերթապահի կառավարման վահանակին: Զորամասի հրամանատարի հրամանով տոնական օրերին մարտական դրոշի ապակեպատ տարածքի դիմաց կարող է կարգվել ժամապահ՝ երկու հերթափոխով, առավել պատրաստված զինծառայողներից:

Մարտական դրոշի ապակեպատ տարածքի ներսում տեղադրվում են՝

- մարտական դրոշի հետեւի պատին՝ Հայաստանի Հանրապետության դրոշը (աջ կողմում՝ դեմքով դեպի պատը դիրքից), Հայաստանի Հանրապետության զինանշանը (ձախ կողմում՝ դեմքով դեպի պատը դիրքից), Հայաստանի Հանրապետության օրհներգի տեքստը (մեջտեղում),

- մարտական դրոշի աջ պատին՝ զինվորական երդման տեքստը, իսկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասերում՝ նաեւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինանշանը,

- մարտական դրոշի ձախ պատին՝ զորամասի մարտական ուղին:

(26-րդ կետը փոփ. 01.03.17 ՀՕ-52-Ն օրենք)

27. Զորամասը ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային եւ օդային տրանսպորտով տեղափոխելու ժամանակ մարտական դրոշի համար հատկացվում է առանձին ավտոմեքենա, վագոն, նավախուց եւ ինքնաթիռ (սրահ): Մարտական դրոշի հետ գնում են դրոշակակիրը, օգնականները եւ պահակախումբը, ինչպես նաեւ կարող են տեղափոխվել դրամի եւ գաղտնի փաստաթղթերի արկղերը:

28. Մարտական դրոշը ճիշտ պահելու եւ պահպանելու համար անմիջականորեն պատասխանատու է զորամասի շտաբի պետը:

Նա պարտավոր է.

շաբաթվա ընթացքում առնվազն մեկ անգամ ստուգել մարտական դրոշի պահպանության գործընթացը.

ամսական մեկ անգամից ոչ պակաս անցկացնել մարտական դրոշի դիտազննում՝ 29-րդ կետում նշված կարգով.

միջոցներ ձեռնարկել մարտական դրոշի դիտազննման ժամանակ բացահայտված թերությունները վերացնելու ուղղությամբ՝ այդ մասին զեկուցելով զորամասի հրամանատարին.

հատուկ մատյան վարել դրա մեջ գրանցելով դիտազննման ժամանակը, մարտական դրոշի դիտազննման ժամանակ բացահայտված թերությունները՝ այդ մասին զեկուցելով զորամասի հրամանատարին:

(28-րդ կետը փոփ. 01.03.17 ՀՕ-52-Ն օրենք)

29. Մարտական դրոշի դիտազննում իրականացնում է շտաբի պետը՝ զորամասի հերթապահի, դրոշակակրի, օգնականների եւ պահակապետի ներկայությամբ: Դիտազննման համար շտաբի պետը հրամայում է բացել մարտական դրոշը: Այդ հրամանով՝ դրոշակակիրը մարտական դրոշն իջեցնում է հորիզոնական դիրքի, օգնականներից մեկը հանում է ծածկոցը: Երբ ծածկոցն արդեն հանված է, դրոշակակիրը, ձողափայտը դանդաղ պահելով, բացում է մարտական դրոշը: Օգնականները օգնում են դրոշակակրին եւ հետեւում, որպեսզի չխճճվեն առաստաղները, ծոպերը եւ որպեսզի պաստառը չքսվի գետնին (հատակին): Այդ ընթացքում ստուգվում են շքանշանների քանակը եւ վիճակը, շքանշանային ժապավենների եւ պաստառի վիճակը, ծածկոցի, առասանների, ծոպերի, ձողափայտին եւ ծայրակալի անվթարությունը: Շտաբի պետի՝ մարտական դրոշը հավաքելու հրամանով դրոշակակիրը մարտական դրոշն իջեցնում է հորիզոնական դիրքի՝ հետեւելով, որպեսզի պաստառը գետնին (հատակին) չքսվի, իսկ օգնականը բռնում է պաստառի անկյուններից եւ թեթեւակիորեն ձգում է այն: Դրոշակակիրն ու մյուս օգնականը, դանդաղ պտտելով ձողափայտը, փաթաթում են պաստառը՝ երեսի կողմով դեպի ներս, այդ ընթացքում հետեւելով որպեսզի ծալվածքներ չառաջանան եւ շքանշանային ժապավենները, առասաններն ու ծոպերը չխճճվեն: Ծոպերը դրվում են փաթաթված պաստառի երկայնքով, ձգված առասաններով:

Երբ պաստառը հավաքված է լինում, օգնականները մարտական դրոշի վրա հագցնում են ծածկոցը, շտաբի պետը կնքում է այն զինանշանավոր կնիքով եւ դրանից հետո մարտական դրոշը տեղադրվում է ապակեպատ տարածքում:

(29-րդ կետը փոփ. 01.03.17 ՀՕ-52-Ն օրենք)

30. Մարտական դրոշը, զորամաս դուրս բերելիս եւ այն դրոշակակիր դասակի հանձնելիս, դրա բացումն ու փաթաթումը իրականացնում են դրոշակակիրն ու օգնականները՝ շտաբի պետի կամ նրա օգնականի (տեղակալի) անմիջական հսկողության տակ, ինչպես նշված է սույն Կանոնադրքի 29-րդ կետում:

(30-րդ կետը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն օրենք)

31. Մարտական դրոշի պաստառի չորացումն իրականացվում է շինությունից դուրս՝ ստվերում կամ շինության ներսում: չորացման ընթացքում մարտական դրոշը պահպանում են դրոշակակիրը եւ օգնականը:

ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄԸ

32. Զորամասի կազմացրման դեպքում մարտական դրոշը եւ ~~նրա պահպանագիրը~~ ***մարտական դրոշի վկայագիրը,*** պատմական համառոտ տեղեկանքի հետ սուրհանդակային-փոստային կապի ծառայության կողմից շտաբի միջոցով գաղտնի ուղարկվում է զինված ուժերի թանգարան:

Կազմակերպական փոփոխությունների հետ կապված այլ պատճառներով զորամասի մարտական դրոշը կարող է թանգարան հանձնվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի որոշումով:

33. Զգալի վնասվածքներ ստացած կամ ժամանակի ընթացքում հնացած մարտական դրոշները, որոնց նորոգումն ու վերանորոգումն անհնար է, ենթակա են փոխարինման:

34. Մարտական դրոշը փոխելու կամ նորոգման մասին որոշում ընդունելու համար մարտական դրոշի դիտազննում է անցկացնում հատուկ նշանակված հանձնաժողովը՝ կազմված շտաբի, պաշտպանության նախարարության ներկայացուցիչներից՝ զորամասի շտաբի պետի մասնակցությամբ: Դիտազննման ակտում նշվում են մարտական դրոշի վրա եղած բոլոր թերությունները, դրանց գոյացման հանգամանքները, ինչպես նաեւ մարտական դրոշը փոխելու կամ նրա նորոգումը տեղում կատարելու մասին հանձնաժողովի եզրակացությունը: Մարտական դրոշի դիտազննման ակտը հաստատում է գլխավոր շտաբի պետը եւ որոշում ընդունում մարտական դրոշը փոխելու կամ այն նորոգելու մասին:

Մարտական դրոշը փոխելու որոշմանը համապատասխան՝ գլխավոր շտաբը նոր մարտական դրոշ պատրաստելու հայտ է ներկայացնում, որը հաստատված ակտի հետ միասին ուղարկվում է պաշտպանության նախարարության իրավասու ծառայություն:

Պատրաստված նոր մարտական դրոշը պաշտպանության նախարարության իրավասու ծառայությունը սահմանված կարգով ուղարկում է զորամասի շտաբ: Նոր մարտական դրոշի ստացումից հետո հին մարտական դրոշը պատմական համառոտ տեղեկանքի հետ ուղարկվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի թանգարան:

(34-րդ կետը փոփ. 01.03.17 ՀՕ-52-Ն օրենք)

35. Արգելվում է մարտական դրոշի պաստառի նորոգումը իրականացնել զորամասի ուժերով եւ միջոցներով: Թույլատրվում է միայն ձողափայտի, ծայրակալի եւ առասանների ծայրահեղ անհրաժեշտ նորոգումը:

Մարտական դրոշի պաստառի նորոգումը իրականացնելու անհրաժեշտության դեպքում զորամասի հրամանատարը պարտավոր է մարտական դրոշի պաստառը հատուկ արհեստանոց ուղարկելու խնդրագիր ներկայացնել: Թույլտվություն ստանալու դեպքում մարտական դրոշի պաստառը սուրհանդակային-փոստային կապի ծառայության միջոցով ուղարկվում է արհեստանոց:

Մարտական դրոշի պաստառի հանձնումը նորոգման ձեւակերպվում է ակտով: